Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
դեկտեմբերի 9 -ի N 794 - Ա
որոշման

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Արցախի Հանրապետությունում 27.09.2020 թ. սկսված պատերազմական գործողություններից տուժած, ինչպես նաև Արցախի Հանրապետության պաշտպանությանը մասնակցող անձանց սոցիալական աջակցության տրամադրում
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով այլ արտոնություններից
3	Բարեգործը	Հովարդ Կարագյոզյան Հիշատակի Ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք, 381 Պարկ ԱվենյուՍաութ)
4	Ծրագիրը կատարողը	«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն, իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Նորքի Այգիներ 180, ՀՎՀՀ-01533153
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ամբողջ տարածք, բնագավառը՝ սոցիալական
6	Ծրագրի բյուջեն	53,680,000 ՀՀ դրամ

7	Բարեգործություն ստացողը	2020 թ. -ի դրությամբ շահառուներ են հանդիսանում Արցախի Հանրապետությունում 27.09.2020 թ. սկսված պատերազմական գործողություններից տուժած, ինչպես նաև Արցախի Հանրապետության պաշտպանությանը մասնակցող անձինք:	
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Աջակցության նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը ժամկետի համար	
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում 2020 թ. նախատեսվում է տարբեր միջոցառումներ կազմակերպել՝ ուղղված Արցախի Հանրապետությունում 27.09.2020 թ. սկսված պատերազմական գործողություններից տուժած, ինչպես նաև Արցախի Հանրապետության պաշտպանությանը մասնակցող անձանց սոցիալական կարիքների որոշ չափով բավարարմանը: Նշված միջոցառումների իրականացման համար 2020 թ. սեպտեմբերից մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը նախատեսված են ֆինանսական միջոցներ՝ 53,680,000 ՀՀ դրամի չափով, որոնք, ըստ ուղղությունների, բաշխված են հետևյալ ձևով.	
	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Սոցիալական աջակցություն, այդ թվում՝	
		Դրամական օգնություն	6,100,000
		Հագուստի, հիգիենայի պարագաների և այլ իրերի տրամադրում	25,640,000
		Սննդի տրամադրում	21,940,000
		Ընդամենը	53,680,000
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Օգտվելու ենք տարբեր մատակարարող կազմակերպությունների կողմից մատակարարվող ապրանքներից և մատուցվող ծառայություններից՝	
		Կնքվելու են պայմանագրեր հագուստի, հիգիենայի պարագաների և այլ իրերի ձեռքբերման համար	25,640,000
		Կնքվելու են պայմանագրեր սննդի ձեռքբերման համար	21,940,000
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: Կազմակերպական ծախսերը կիրականացվեն «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ-ի կողմից իրականացվող հիմնական տարեկան ծրագրի միջոցների հաշվին:	

12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Բարեգործության ոլորտը համակարգող լիազոր մարմին, բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողով, հիշյալ շահառուներին օգնության տրամադրումը համակարգող Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պետական, տեղական ինքկառավարման մարմիններ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	«Հովարդ Կարագյոզյան» հիշատակի ընկերակցությանը /ԱՄՆ/ և «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ անդամներին ամսական և տարեկան հաշվետվությունների ներկայացում, ՀՀ պետական եկամուտների կոմիտեին ՀՀ օրենքով սահմանված հաշվետվությունների/հաշվարկների ներկայացում, ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակում զանգվածային լրատվության միջոցներով, ՀՀ կառավարության 16.01.2013 թ. թիվ 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ